ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 1408-Ն, 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 138-Ն ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1031-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 704-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի մայիսի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումով խնդրել է որոշել ՀՀ Կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Կառավարության՝ «2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) ընդունվել, ստորագրվել է 2021 թվականի մայիսի 4-ին և ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 5-ին:

2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումների սկզբնական խմբագրությամբ դիմումում նշված բուհերի հոգաբարձուների խորհրդի անդամների կազմի համար սահմանված է եղել հետևյալ համամասնությունը՝ հիմնադրի կողմից առաջադրվող անդամներ՝ 25 տոկոս (պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից), լիազոր մարմնի կողմից առաջադրվող անդամներ՝ 25 տոկոս (կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ), համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ընտրվող անդամներ՝ 25 տոկոս, ուսանողության կողմից ընտրվող անդամներ՝ 25 տոկոս: Այսպիսով, մինչ Որոշմամբ կատարված փոփոխությունը՝ հիմնադրամների կարգավիճակ ունեցող բուհերի հոգաբարձուների խորհրդների ներկայացուցչական համամասնությունը բաշխված էր հավասարապես. խորհուրդ ձևավորող յուրաքանչյուր կողմին տրվում էր կազմի 25 տոկոսը ձևավորելու իրավունք:

Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 704-Ն որոշմամբ երեք բուհի՝ Երևանի պետական համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի համար «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով, նվազագույն շեմին (20 հոգի) համապատասխան, սահմանվել է ներկայացվածության հետևյալ բաշխվածությունը՝ հիմնադրի կողմից 55 տոկոս կամ 11 հոգի, պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, բուհի պրոֆեսորադասախոսական կազմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, ուսանողական համակազմի ներկայացուցիչներից՝ 25 տոկոս կամ 5 հոգի:

Սույն թվականի հունիսի 22-ին Սահմանադրական դատարանը, քննարկելով «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2021

թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով վիճարկվող՝ ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-ն որոշման գործողությունը կասեցնելու վերաբերյալ» հարցը, բավարարել է դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունը և **ՍԴԱՈ-121 որոշմամբ կասեցրել է** Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-ն որոշման գործողությունը մինչև գործի դատաքննության ավարտը:

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ կառավարությունն ընդունել է 1448-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»: Այս ընդհանուր որոշմամբ ՀՀ կառավարությունը, ի թիվս այլ որոշումների, լրացումներ ու փոփոխություններ է կատարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումով վիճարկվող ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում: Համաձայն այդ որոշման՝ դիմումում նշված բուհերի հոգաբարձուների խորհրդի անդամների կազմի համար սահմանվել է հետևյալ համամասնությունը՝ հիմնադրի կողմից առաջադրվող անդամներ՝ 25 տոկոս (պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից), լիազոր մարմնի կողմից առաջադրվող անդամներ 25 տոկոս (կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ), համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ընտրվող անդամներ՝ 25 տոկոս, ուսանողության կողմից ընտրվող անդամներ՝ 25

տոկոս: Այսպիսով, կատարված փոփոխությամբ հիմնադրամների կարգավիճակ ունեցող բուհերի հոգաբարձուների խորհուրդների ներկայացուցչական համամասնությունը նորից բաշխվել է հավասարապես՝ խորհուրդ ձևավորող յուրաքանչյուր կողմին օժտելով կազմի 25 տոկոսը առաջադրելու (ընտրելու) հնարավորությամբ:

Որոշման 18-րդ և 19-րդ կետերի համաձայն՝ սահմանված պահանջներին համապատասխան՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների խորհուրդները ձևավորվելու են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը, իսկ գործող խորհուրդները շարունակում են իրենց լիազորությունների իրականացումը մինչև նոր խորհուրդների ձևավորումը: Դրան համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին հանձնարարվել է ապահովել բարձրագույն ուսումնական հաստատությունների կանոնադրություններում Որոշումից բխող փոփոխությունների պետական գրանցումը օրենքով սահմանված կարգով:

3. Դիմողը գտնում է, որ որոշմամբ նախատեսված կարգավորումները խախտում են կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն անքակտելի բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը և կարող են հանգեցնել այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Դիմողը նշում է, որ Կառավարությունը 2021 թվականի մայիսի 4-ին՝ առանց նիստ հրավիրելու, գրավոր քվեարկությամբ թիվ 704-Ն որոշմամբ ընդունել է պետական ուսումնական հաստատություններից երեքի հոգաբարձուների խորհուրդների կազմին վերաբերող փոփոխությունները:

Դիմողը համոզված է, որ նշված օրենքի խնդրո առարկա դրույթների սահմանադրականության վիճարկման պայմաններում նույն հարցը թիրախավորող և առավել անբարենպաստ լուծումներ պարունակող կարգավորումների ամրագրումը Կառավարության որոշմամբ խնդրահարույց է և՛ բովանդակային, և՛ ընթացակարգային առումներով:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող որոշման կարգավորումներով ստացվում է, որ որոշման մեջ նշված երեք բուհերում Հայաստանի Հանրապետության վարչապետի և լիազոր մարմնի կողմից նշանակված անդամները կազմելու են խորհրդի 65 տոկոսը:

Ընդ որում՝ ուսանողների ներկայացվածության 25 տոկոսն էլ չի փոփոխվել՝ հաշվի առնելով «Կրթության մասին» օրենքի պահանջը: Արդյունքում ստացվում է, որ պրոֆեսորադասախոսական կազմից և ուսանողների կողմից ընտրված անդամների ձայները որոշումների կայացման գործընթացում որևէ դերակատարություն չեն ունենալու: Ենթաօրենսդրական մակարդակում բուհերի կառավարման բարձրագույն մարմնի կազմի համամասնության այնպիսի փոփոխությունը, որով նվազում է պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողության ներկայացուցիչների ներկայացվածությունը, ուղղակիորեն հակասում է կրթության իրավունքի առանցքային բաղադրիչի՝ բուհական ինքնավարության երաշխավորմանը:

Ըստ դիմողի՝ բուհերի կառավարման խորհուրդների կազմերի համամասնության փոփոխությունը՝ որպես օրենսդրական փոփոխությունների հիմնական թիրախ դարձնելը, մասնագիտական և ակադեմիական շրջանակներին այդ գործընթացից անմասն թողնելը կասկածի տակ են դնում հետապնդվող նպատակների իրագործելիությունը:

Դիմողը նշում է, որ կառավարության նախաձեռնած որոշմամբ նախատեսվում է, որ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի նշանակված անդամները պետք է կազմեն բուհի ինքնակառավարման մարմնի մեծ մասը և որոշիչ ազդեցություն են ունենալու բուհի կառավարման հարցերի վրա: Իսկ բուհի հոգաբարձուների խորհրդի՝ Վարչապետի ու լիազոր մարմնի առաջադրած անդամների նկատմամբ էլ որոշիչ ազդեցություն են ունենալու հենց նրանց նշանակած պաշտոնատար անձը կամ մարմինը: Նրանց համար նույնիսկ գոյություն չունեն անկախության երաշխավորման երաշխիքներ ու չեն էլ կարող լինել: Այն, որ նրանց վրա գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կամ լիազոր մարմինն ունենալու են որոշիչ ազդեցություն և այդ ազդեցությամբ կարող է բուհի ինքնակառավարումը խաթարվել, վկայում է հենց գործող պրակտիկան (օրինակ՝ լիազոր մարմնի առաջադրած անդամների հրաժարականներն առանց պատճառաբանության կամ նրանց միասնաբար չներկայանալը խորհրդի նիստերին):

4. Պատասխանողը նշում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի 704-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել հիմնադրամի կարգավիճակ ունեցող Հայաստանի Հանրապետության երեք պետա-

կան բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի ձևավորման գործընթացում՝ նվազեցնելով խորհրդի անդամների ընդհանուր թվաքանակը և սահմանելով նոր հարաբերակցություն:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող որոշումը նախաձեռնվել և ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին», «Հիմնադրամների մասին» օրենքների գործող կարգավորումների շրջանակներում: Նման օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությունը «տարակուսելի» չէ: Դրա ընդունման հիմքում ընկած չէ Սահմանադրական դատարանում վիճարկման առարկա՝ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը, ինչպես փորձում է պնդել դիմողը, և անմիջականորեն կապել դրա, մասնավորապես, օրենքի 27-րդ հոդվածի հետ: Պատասխանողը պնդում է, որ առնվազն տարակուսելի են դիմողի այն պնդումներն ու համոզմունքները, թե Կառավարության այս նախաձեռնությունը՝ Հանրապետության նախագահի կողմից Ազգային ժողովի 2021 թվականի մարտի 24-ին ընդունած «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը Սահմանադրական դատարանում վիճարկելու պարագայում, անհարգալից վերաբերմունք է Սահմանադրական դատարանի ու Հանրապետության նախագահի սահմանադրական ինստիտուտների, նրանց սահմանադրական լիազորությունների նկատմամբ, «արժեզրկում» կամ «իմաստազրկում», արգելափակում է Հանրապետության նախագահի՝ Սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավասությունը, միտում ունի ճնշում գործադրելու Բարձր դատարանի վրա: Դրանք ենթադրություններ են, հիմնավորված չեն և իրականության հետ որևէ աղերս չունեն:

Պատասխանողը շեշտում է, որ վիճարկվող որոշման ընդունմամբ ակնկալվում էր ապահովել բուհերի բնականոն գործունեությունը և խուսափել որոշման մեջ նշված երեք բուհերում հոգաբարձուների գործող խորհուրդներ ձևավորված չլինելու պարագայում հավանական անդառնալի իրավական հետևանքներից: Կառավարության վիճարկվող որոշման ընդունման նպատակն էր կառավարման կայունությունն ապահովել բուհերում: Այն վերաբերում է 3 բուհի՝ Երևանի պետական համալսարանին, Խաչա-

տուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանին, որոնց կանոնադրություններում կատարվել է հոգաբարձուների խորհուրդների թվակազմի փոփոխություն՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով, նվազագույն շեմին (20 հոգի) համապատասխան, սահմանվել է ներկայացվածության հետևյալ բաշխվածությունը՝ հիմնադրի կողմից 55 տոկոս կամ 11 հոգի, պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, բուհի պրոֆեսորադասախոսական կազմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, ուսանողական համակազմի ներկայացուցիչներից՝ 25 տոկոս կամ 5 հոգի:

Պատասխանողը նաև նշում է, որ բուհերի կառավարման խորհուրդների կազմերի համամասնության փոփոխությանը վերաբերող գործընթացից մասնագիտական և ակադեմիական շրջանակներն անմասն չեն մնացել, և չի կարող կասկածի տակ դրվել հետապնդվող նպատակների իրագործելիությունը: Վիճարկվող որոշումը նպատակ չունի անսահմանափակ վերահսկողություն սահմանել բուհերի, մասնավորապես և առաջին հերթին ԵՊՀ-ի նկատմամբ: Կառավարության նախաձեռնած որոշմամբ նախատեսվում է, որ բուհերի հիմնադրի նշանակած անդամները բուհի կառավարման մարմնում պետք է կազմեն մեծամասնություն: Նրանց վրա հիմնադրի կամ լիազոր մարմնի «ունեցած ազդեցությամբ» չի կարող խաթարվել բուհի ինքնակառավարումը, բուհական համակարգում կրթական, ակադեմիական ազատության ու համագործակցային միջավայրը:

5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոհիշյալ դիմումով գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ կառավարությունն ընդունել է 1448-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»: Այս ընդհանուր որոշմամբ ՀՀ կառավարությունը, ի թիվս այլ որոշումների, լրացումներ ու փոփոխություններ է կատարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումով վիճարկվող ՀՀ կառավարու-

թյան 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում, ինչի հետևանքով սույն թվականի մայիսի 4-ին այդ որոշումներում կատարված լրացումներն ու փոփոխությունները կորցրել են իրենց իրավական ուժը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 սեպտեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-195